№ 46. Նոյեմբերի 22. — 1873 — Նոյեմբերի 22. № 46.

ՇԱԲԱԹԱԹԵՐԹԻ ԳԻՆԸ։

Տարեկան գինն է 5 ռուբլի (փոստի ծախսով)։ Օտարաքաղաքացի բաժանորդները պիտի դիմեն այս հասցէով. Въ Тифлисъ. Въ Редакцію Армянской Газеты „Мшакъ“.

Թիֆլիսում կարելի է ստորագրվիլ խմբագրատան մէջ (Արծրունու տան) և պ. Պատուրեանցի խանութում։

ՄՇԱԿ

ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԵԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆ։

Սասնաւոր յայտարարութիւն տպել տուողը պիտի վճարէ 10 հասարակ տառի համար 1 կոպէկ արծաթ։ Յայտարարութիւններ տպվումեն հայերէն, ռուսերէն, վրացերէն, ֆրանսիարէն, գերմաներէն և թուրքերէն։

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

Կը հրատարակվի 1874 թուին նոյն պրոգրամմայով։ Տարեկան գինը՝ 5 ռուբլ է, կէս տարվանը՝ 3 ռուբլ։ Օտարաքաղաքացիները դիմում են հետևեալ հասցէով՝ Въ Редакцію газеты „Мшакъ“ въ Тифлисѣ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

«Մշակի» յայտարարութիւն։—Իզուր են ձեր բոլոր ջանքերը։—Ներքին տեսութիւն։ Թիֆլիսի գիւղատնտեսական ընկերութիւնը։ Նամակ Նուխուց։ Ներքին լուրեր։—Արտաքին տեսութիւն։ Գերմանիայի ազգային շարժումը։ Նամակ Լօնդոնից։ Նամակ Փարիզից։—Խառն լուրեր։—Առևտրական։—Յայտարարութիւններ։—Բանասիրական։ Եկեղեցականների հարցը։

ԻԶՈՒՐ ԵՆ ՁԵՐ ԲՈԼՈՐ ՋԱՆՔԵՐԸ

Մենք, մենք, ասում է „Սեղու Ֆայաստանի լրագիրը, մենք ասացինք այս ինչ համարում, մենք միշտ ենք պաշտպանել այն ինչ միտքը, մենք, մենք.....

Ով էք դուք....

Այդ բաւական չէ։ Դուրս են գալիս մարդիք, պ. Գ. Ե. ինքնակոչ հաշտարարի պէս, (տես „Մեղու“ № 44) որ ասում է՝ „Մեղուն“ աւելի հին է, ուրեմն աւելի փորձված ու աւելի համբերող է, ուրեմն նա պիտի դուվելի օրինակ ցոյց տայ և դադարեցնէ պոլեմիկը.....

Մինչև երբ մենք դեռ ևս պիտի դժբաղդութիւն ունենանք Գ. Ե. պարոնի պէս կարճատես և տգէտ մարդիկ ունենալ, որք կարծում են որ ամեն բան լաւ է, երբ նա հին է...։ Օրինակ մենք համոզված ենք, որ պ. Գ. Ե., նայելով նրա երևելի լոգիկայի, ամբողջ կեանքը սխալ մտքերը կը յայտնէ....Ուրեմն ինչ օգուտ որ նա կը ծերանայ կամ կը հնանայ։ Անզարդացած մարդը երբ հնանում է, նրա հետ հնանում է և նրա անզարդացումը։ Ասում էք „Մեղուն“ փորձ ունի՝—ինչ օգուտ... անզարդացած, տգէտ մարդու փորձը, միշտ մնում է անզարդացած, տգէտ մարդու փորձը....

Բայց բացի սրանից շատ վատ յիշողութիւն ունիք թէ դուք պ. Գ. Ե., թէ դուք պ. խմբագիրը, որ թոյլ էք տալիս տպել ձեր լրագրի էջերում այնպիսի յօդվածը, ինչպէս № 44-որդի առաջնորդողը։

„Մեղուն“ բոլորովին հին չէ, նա „Մշակից“ նոր է։ „Մշակը“ սկսվել է յունվարի 1-ից, 1872 թուի, իսկ „Մեղու Ֆայաստանի“ լրագրի առաջին համարը նոյն տարվայ երկու թէ երեք ամսից ուշ է դուրս եկել.....

Մինչև այն ժամանակ կար Ֆ. Մանդինեանցի „Մեղուն“, յետոյ Պետրոս Սիմոնեանցի „Մեղուն“ որ իր ուղղութեամբ բացի հայ լրագրութեան անունը կոտրելուց, ուրիշ ոչինչ չը կարացաւ յարուցանել հայ հասարակութեան մէջ։

Իսկ մեղուականների „Մեղու Ֆայաստանի“ լրագիրը նոր է, „Մշակից“ նոր է, այն մեղուականների, որք համալսարանում ուսում աւարտելուց յետոյ, քանի մի տարի ոչ թէ միայն ոչինչ չէին անում, բացի փողոցները չափելուց, ոչ թէ միայն չը մտածեցին պ. Սիմէոնեանցի ողորմելի „Մեղուի“ հետ միանալ, որ օգնեն նրան թէ յօդվածներ գրելով, թէ գոնէ հում նիւթեր տալով,—բայց մինչև անգամ ծիծաղում էին մեղ վրա, որ մենք արդէն 1865 թուից գրում էինք թէ „Մեղու Ֆայաստանի“ թէ „Ֆայկական Աշխարհի“ մէջ, խորհուրդ էին տալիս մեղ չը գրել հայերէն, որովհետև կարդացող չը կայ, իսկ իրանք կանդիդատներ կամ իսկական ուսանողներ լինելով, էլ չէին կարող ոչինչ նոր բան սովորելու, որովհետև ամեն բան գիտէին, իրանց սահմանափակ հասկացողութեամբ։

Այդ բաւական չէ՝ նրանք երբ լսեցին, որ մենք ինքներս դիտաւորութիւն ունենք հայերէն մի թերթ հրատարակելու, խորհուրդ էին տալիս, որ հայերին հասկանալի լինի, գոնէ կէսը հայերէն տպենք, իսկ միւս կէսը օտար լեզվով....

Մարդիկ, որք իրանց օրումը, բացի մէկից կամ երկուսից, այն էլ ոչ պարբերական թերթերում, կամ ամսագիրներում, և այն էլ ոչինչ բացի թարգմանութիւններից, երբէք մի տող գրած չէին ոչ թէ միայն հայերէն, բայց և ոչ մի լեզվով,—ահա այդ մարդիկը, որք այժմ ստիպվեցան աշխատել, մոռանալով իրանց հակաազգային անցեալը, իրաւունք ունեն ուրիշներին կոսմոպոլիտ անուանել, իսկ իրանց՝ ազգային ոգու պաշտպաններ....

Այո՛, մենք կոսմոպոլիտներ ենք, լաւ համարելով կոսմոպոլիտ լինել, քան թէ ձեզ պէս հայեր, այո՛ մենք կոսմոպոլիտներ ենք, և համոզված ենք, որ կոսմոպոլիտութիւնը կը տանէ հային դէպի ճշմարիտ ազգային օգուտները աւելի հեշտութեամբ, քան թէ ձեր նեղ, սահմանափակված, ազգամոլ միջոցներով, բաժանելով հայերին կրթեալ աշխարհից ձեր ագիտութեան չինական պատով, քարոզելով հային թշնամութիւն դէպի Եւրոպա և դէպի այն մարդիկ, որք այնտեղ ուսել են։

Դուք էիք, դուք ձեր հին սերունդի արժանի շարունակողները, դուք այսօրվայ ազգամոլները, և երեկվայ անտարբերները, դուք էիք, որ ձեր ազդեցութեամբ ամեն հայի շրջաններում մացրիք անտարբերութիւն դէպի հայութիւնը, դուք էիք որ մեր ընտանիքների օրիորդների սրտերին չը կարողացաք շնչել ոչ մի բարձր, ազնիւ կիրք, բացի մի կրքից,—թղթախաղից, դուք էիք այն անշունչ էակները, որք հեռու լինելով ազգային յատկութիւններից, մի և նոյն ժամանակ զուրկ էիք ընդհանուր մարդկային գաղափարներից....

Եւ հիմի դուք էք, որք յանդգնում էք հանդիսանալ, որպէս ազգութեան պաշտպաններ, դուք որ երբէք չը գիտէիք ի՞նչ է աշխատանք, դուք որ մեր ինն տարվայ բոլոր ջանքերը, որքան և թոյլ լինէին նրանք, ծաղր էիք առնում, դուք էք որ սեփականացնում էք ձեզ իրաւունքը ասել՝ մենք կը բարձրացնենք մեր ձայնը ինչպէս և բարձրացրել ենք միշտ, երբ համոզված ենք եղել որ այս կամ այն գրականական երևոյթը վնասակար է ազգի շահերին,—դուք էք ասում այս, երբ յունվար ամսին 1872 թուին դուք դեռ հերքում էիք այդ ազգի շահերը....

Դուք էք որ այժմ յանդգնում էք քննադատել մեզ, մոռանալով որ մենք ենք ստիպել ձեզ գրել, մենք ենք ստիպել ձեզ այնպիսի գործունէութեան, աշխատանքին, որ ձեզ երբէք ծանօթ չէր....

Եւ էլի կը ստիպենք ձեզ աշխատել, կը ստիպենք ձեզ ենթարկվել մեր գաղափարներին, ինչպէս որ ստիպեցինք աշխատելու, աշխատանքին անսովոր մարդիկներին....

Երկուսից մինը՝

Կամ կը ստիպենք ձեզ ընդունել մեր մտքերը,

Կամ կը ստիպենք խօստովանել ձեր սեփական անընդունակութիւնը, թողնելով հասարակական ասպարէզը։

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԵԿԵՂԵՑԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՐՑԸ

Ա.

„Մշակի“ թէ ներկայ և թէ անցեալ տարուայ համարներում կարդացուեցան զանազան յօդուածներ, նամակներ և խառն լուրեր՝ մեր եկեղեցականների վերաբերութեամբ։ Այդ հարցը բաւականապէս բազմակողմանի կերպով քննուած լինելով, մենք աւելորդ չենք համարում մեր կողմից աւելացնել մի քանի կարծիքներ։

Մենք տեսանք, «քահանայ» բառը լսելու ժամանակ հայը մեծ մասամբ երևակայում է իւրեան մի մարդ, որ պատրաստ էր նորա քսակից մի քանի կոպէկներ դուրս քաշելու։

Մենք տեսանք, որ ժողովրդի անհամակրութիւնը դէպի իւր հոգևոր հայրերի մի մասը հասել է մինչև մոհաւատութեան։ Հայը վաղ առաւօտեան տէրտէրի երես տեսած ժամանակ, մտածում է, թէ այնօր նորադործերը չեն յաջողուի։

Մենք տեսանք, եկեղեցւոյ սուրբ խորհուրդները,—պսակը, մկրտութիւնը, թաղումը, կարգը և այլն,—սուրբ սեղանի պաշտօնեայների ձեռքում դարձել են վաճառքի նիւթեր։

Մենք տեսանք, հասարակական գործերում յարմարութիւն չունեցող ամեն մի տգէտ և անընդունակ մարդը՝ եկեղեցւոյ պաշտօնի մէջ ընդունելութիւն է գտնում։ Քահանայութեան ծանր լուծը, որ «ընտրեալներին» միայն տանելի է, զանազան տխմարների ձեռքում խաղալիկ է դառնում։

Մենք տեսանք, ուր կրօնափոխութիւն է պատահում, դրդիչ պատճառներից մինը եկեղեցական հայրերն են։ Ուր ուսումնարանների փողը, կամ սուրբ սեղանի գանձանակն է անհետանում, ուր ժողովրդական երկպառակութիւնք են լինում, ուր ազգային դաւաճանութիւնք են լինում, շատ անգամ դաղտնի մեքենան շարժողները հոգևորականներն են։

Վերջապէս ինչեր չը տեսանք մենք...

Բ.

Ինչ են այդ անմխիթար երևոյթների պատճառները։

Ոմանք պատճառը դտան նոցա բարոյական և մտաւոր անկրթութեան մէջ և առաջարկեցին հոգևոր բարձր դպրոցներ, կամ մի աստուածաբանական ֆակուլտետ, գիտնական եկեղեցականներ պատրաստելու համար։ Այդ հայացքը, թէ և հեռու չէ հաւանականութիւնից, բայց սնի իւր ինքնակար հետևանքները։

Մարդկային քաղաքակրթութեան պատմութիւնը մեզ ցոյց տուեց, որ յատկապէս նեղ—կրօնական ուղղութեամբ եկեղեցականներ պատրաստելու նպատակով հիմնուած դպրոցները միշտ վնասեցին ընդհանուր կրթութեան զարդացմանը։ Նոքա կազմեցին կղերականների զանազան դասեր, ժողովրդի պիտոյքներից բոլորովին տարբեր դաղափարներով, որք կրօնական դիմակի տակ սկսան տիրել ժողովրդի վերա, յիմարացնել նորան և հարստահարել նորա շահերը։ Այդ իրողութիւնը չոչափելի կացուցանելու համար, իբրև օրինակ, բաւական է աչքի առաջ ունենալ եղուիտները, լազարիստները, դոմինիկանները, և այլ կղերական միաբանութիւնները։

Թէ գիտութիւնը և ուսումը պէտք է եկեղեցականներին, այդ հերքել ոչ ոք կարող չէ։ Բայց որոշ կրօնական ուղղութեամբ մատակարարուած կրթութիւնը միշտ խորութիւն է բացում ժողովրդի և իւր եկեղեցականների մէջ, որք իւրեանց պահանջմունքներով չեն համապատասխանում միմեանց։

Կրթեալ եկեղեցականը պէտք է ծադէ նոյն իսկ եկեղեցւոյ սրտից, այլ խօսքով, ժողովրդի միջից պէտք է յայտնվին նորա հոգևոր և մարմնաւոր պէտքերը հոգացող անձինքը, որ կարողանան իւրեանց գիտութեամբը բաւականութիւն տալ այն շրջանի կարիքներին, ուսկից դուրս եկան իրանք և որին ծանօթ էին արդէն։

Այդպէս վարուեցաւ և մեր կրօնքի վարդապետը—ինքը Մեսիան։ Նա իւր աշակերտները չընտրեց դպիրներից, որոց մօտ էր հին կտակարանի գիտութիւնը, և ոչ մի զնատցի նորա առաքեալների թուում չը մտաւ։ Այլ նոր կրօնքի քարոզիչներն եղան հասարակ ձկնորսներ, բոլորովին ժողովրդական մարդիք, որք իւրեանց ծագումով աւելի մօտ էին ժողովրդի սրտին և նորա հոգուն։

Բայց ինչ է պատճառը, որ մեզանում աշխարհականներից կրթեալ և գիտնական անձինք միշտ իւրեանց հեռու են պահում եկեղեցական պաշտօնների մէջ մտնելուց։

Պատճառը խիստ պարզ է։

Հասարակական գործերի մէջ ամենաստոր պաշտօնակալը,—դիւանատան գրագիրը, վաճառականը, գործակատարը, հիւրանոցի սպասաւորը,—իւր աչքի առաջ ունի մի որոշեալ եկամուտ, որով նա ապահովում է իւր ապրուստը։ Բայց եկեղեցականը ոչինչ հաստատ եկամուտ ի նկատի չունի։

գինու վրա, որտեղ նա ապացուցանում էր, որ կարելի է մի տարվայ գինին եփելով, հասցնել նրան այն թնդութեան աստիճանին և տևողութեան ընդունակութեանը, ինչպէս հինգ վեց տարվայ հին գինին։ Եթէ այդ գիւտի ճիշդ լինելը կը վերաստուգվի նորից անելու փորձերով, մեծ նշանակութիւն պիտի ունենայ մեր գինիների օտար երկիրները արդիւնահանութեան համար։ Մինչև այժմ մեր գինիները այնքան վատ էին պատրաստվում, որ շատ հեշտ ենթարկվում էին փչանալուն։ Մենք այդ բանումն էլ ցոյց ենք տալիս մեր մենաշնորհական բնաւորութիւնը՝—ինձ ի՞նչ, որ մեր գինիները անպիտան կերպով պատրաստված են, ինձ համար նրանք շատ լաւ են, ինձ ի՞նչ որ մեր գինիները, ասում է ունևոր կովկասցին, չեն դիմանում վաճառահանութեան, որ նրանք մեր երկրիս համար երբէք լինելու չեն արդիւնահանութեան առարկայ, հարստութեան աղբիւր,—ես ինքս ունեմ կարողութիւն միշտ առնել և միշտ խմել, իսկ մնացածը, երկրիս ապագան, ստորին դասի վիճակը՝ թող զլուխը քարը տայ.....

Երկրորդ խնդիրը, (որ մենք երկրորդ ենք յիշում, բայց որ սկզբից վիճաբանվեցաւ), ոչ պակաս հետաքրքրութիւն շարժեց ներկայ գանվողներին։

Վրացի երիտասարդ պ. Ալիվլէդեանի, կարդաց մի յօդված պանրագործութեան վրա առհասարակ, յիշեց այդ արդիւնքի պատրաստութեան գլխաւոր աղբիւրը՝ կանոնաւոր անասնապահութիւնը, ցոյց տուեց որքան անկատար է մեզանում այդ պարապմունքը, որքան ողորմելի հետևանքներ է տալիս նա՝ թէ անասունների վերաբերութեամբ, թէ նիւթական շահի կողմից, նկարագրեց մի աւելի մանրամասն և իրագործելի ապագան, պատմեց իր արած պարապմունքների մասին այդ մասնագիտութեան վերաբերեալ, մեր Կովկասումն էլ պանիր պատրաստելու կանոնաւոր մի գործարան հիմնելու իր բոլոր ջանքը մի առ մի ցոյց տուեց, յիշեց որ ինքն ներկայ է եղել երբ գիւղական ժողովուրդը, թէ Տրիալէթի սարերում թէ Օսէթում անչափ համակրութիւն էր ցոյց տուել այդ գործին, միայն նիւթական միջոցների պակասութեամբ չը կարողացաւ իրագործել գիւղացիներից ընկերակցութեան սկզբի վրա հիմնված պանիր պատրաստելու գործարանը, և վերջապէս խնդրեց գիւղա-տնտեսական ընկերութենից գրական օգնութիւն տալ իրան, ընկերակցութեան (արտելի) վրա հիմնած գործարանը իրագործելու համար։

Պարոն նախագահ, գենէրալ Ստաֆիեվը, նկատեց որ գուցէ եթէ ինքն ընկերութիւնը միջոց չունի նիւթապէս օգնելու մի որ և է ձեռնարկութեան, նա կարող է դիմել տէրութեանը օժանդակութիւն խնդրելու համար։

Հենց որ պ. Ալիվլէդեանին վերջացրեց իր ընթերցանութիւնը, գիւղա-տնտեսական ընկերութեան անդամներից մինը, պ. Դավիդովիչը սկսեց նրան հակառակել, ասելով թէ գիւղական ժողովուրդը ինքն կարող է իր սեփական միջոցներով հիմնել այդ տեսակ գործարան և որ ընկերութիւնը պարտական չէ օգնել ժողովրդին, եթէ ոչ այս ինչ գիւղերին օգնելուց յետոյ, կը պահանջեին որ օժանդակութիւն տանք և մեզանիներին էլ։ Եւ այսպիսով, պարոնի կարծիքով, վերջ չէր ունենայ մեր փողերի ծախսելը։

Պարոն Դաւիդովիչի խօսքերին պատասխանեց զօկտոր Գրիգոր Երծրունին։ Նա ցոյց տուեց որ պարոն Դավիդովիչի կարծիքը բոլորովին սխալ է, որովհետև օգնելով մի գիւղական ընկերութեան, մինթէ այդ նշանակում է որ պիտի օժանդակութիւն տանք բոլորին, և այսպիսով ամբողջ Կովկասի արդիւնաբերութիւնը մեր ծախսով պահենք։ Բայց որովհետև այդ չենք կարող անել, մինթէ նշանակում է որ մի գիւղական ընկերութեանն էլ օգնել չը պէտք է։ Հարկաւոր է քննել, ասեց պ. Երծրունին, թէ ինչ է գիւղա-տնտեսական ընկերութեան նպատակը, արդեօք ա՞յն է որ օգնութիւն հասցնի մասնաւոր արդիւնագէտներին, ինչպէս նա քանի մի անգամ արած է, կամ ջանայ գիւղական բնակիչների, կովկասեան ազգաբնակութեան արդիւնաբերութեանը նպաստելու, մանաւանդ երբ ինքն ժողովրդի մէջ նկատվում է ձգտումն այս կամ այն ընկերակցական ձևը իրագործելու։ Տեղական լրագրութիւնը փորձով գիտէ, որ այս կամ այն գիւղի ժողովրդից քանի մի անգամ յայտնած է եղել ցանկութիւնը օրինակ փոխառու ընկերութիւններ իրագործելու,—բայց իրագործող չը կայ, այն ինչ մեր գիւղա-տնտեսական ընկերութիւնը կարող էր յանձն առնել եթէ ոչ ինքն դրամական օգնութիւն տալով, գոնէ աշխատելով դիմել տէրութեանը և խնդրել նրան այս կամ այն ձեռնարկութեան իրագործման մասին։

Պ. Երծրունուց յետոյ, խօսեց պոլկօվնիկ Գերասիմով, որ պաշտպանելով պ. Երծրունու միտքը և ընդարձակելով նրան, ուշադրութիւն դարձրեց գլխաւորապէս այն բանի վրա, որ գիւղա-տնտեսական ընկերութիւնը եթէ օգնում է մասնաւոր արդիւնագէտներին, աւելի էլ պիտի աշխատէ օգնութիւն տալ այնպիսի ձեռնարկութեան, որտեղ ինքն գիւղական ազգաբնակութիւնը մասնակցում է, և որ հիմնվում է ընկերակցական սկզբի վրա։

Սրանից յետոյ իշխան Գ. Անդրօնիկովը բերեց մի շատ գեղեցիկ օրինակ, որով ապացուցանում էր որ սկզբից տուած օգնութիւնը երբէք չէ կարող կորած կամ ապարդիւն համարվել։ Դուք շատ լաւ գիտէք, ասեց իշ. Անդրօնիկովը, որ կար ժամանակ երբ տէրութիւնը ինքն վարձատրում էր Թիֆլիսի բնակիչներին, որ նրանք ուղարկեն իրանց երեխաներին ուսումնարան, իսկ այժմ իրանք ծնողները վճարում են դասատուութեան համար և դարձեալ բոլոր ուսումնարանները լեքն են այնքան, որ էլ դժուարութեամբ ընդունում են աշակերտներին։ Նոյնը կը լինի և մի որ և է հասարակական հիմնարկութեան հետ, օրինակ պանրագործութեան գիւղական ձեռնարկութեան հետ՝ առաջ տէրութիւնը օգնութիւն կը տայ, յետոյ իրանք հիմնարկութիւնները բաժանելով, մեծ շահեր կը տան ամբողջ երկրին։

Նոյն ուղղութեամբ շարունակեց խօսել և իշխան Զավչավաձէն, աւելի ընդարձակեց նախընթաց ճառերի միտքը, ցոյց տալով որ օգնութիւնը եթէ տուած լինի օրինակ գերմանական կոլոնիային և նրանից արդիւնաբերութեան օրինակը ցոյց տուած լինի, երբէք այնքան ազդելու չէ շրջապատող տեղական գիւղերի ազգաբնակութեան վրա, որքան բաբերաբար ազդեցութիւն կունենայ, եթէ օգնութիւն տուած լինի տեղական բնակիչների մի գիւղին, որի արդիւնաբեր աշխատանքը, օրիօրինակ կը ծառայէ և հարևան գիւղերի համար։

Գ. Նախագահը յայտնեց որ նա ընդդէմ չէ օգնութեան սկզբին, բայց և շատ օգնելն էլ ժողովրդին ընտելացնում է կրաւորականութեան և անհոգութեան։

Գ. Գրիգոր Երծրունին դարձեալ խօսք խնդրելով, նկատեց որ ընկերութիւնը իր կարծիքով չէ կարող զանգատել որ շատ է օգնել, որովհետև մինչև այժմ օգնութիւն է տուել միայն մասնաւոր անձանց, իսկ գիւղական ժողովրդից միայն մի կոլոնիայի գերմանացիներին, որը այնքան կարօտ չէին օգնութեան, որքան տեղական ժողովուրդը։

Գ. Նախագահը գանելով որ հարցը պարզվեցաւ, և որ ներկայ գանված անդամների մեծ մասը համաձայն է որ օգնութիւն տրվի պ. Ալիվլէդեանի հիմնած պանրագործարանին, որպէս զի այդ հիմնարկութիւնը դառնայ ընկերակցական ձեռնարկութիւն, ուր որ մասնակցէին իրանք գիւղացիքը, վերջացրեց խօսքը առաջարկելով որ այդ հարցը, նիւթական տալու օժանդակութեան չափը սահմանելու մասին, քննվի պ. Ալիվլէդեանի հետ միասին, ոչ թէ ընկերութեան ընդհանուր ժողովի նստում, այլ ընկերութեան խորհրդի մէջ։

Նախագահի առաջարկութիւնը ընդունվեցաւ։

Յետոյ կը հաղորդենք մեր ընթերցողին այդ գործի հետևանքի մասին։

Մ. Հ.

ՆԱՄԱԿ ՆՈՒԽԻՒՑ

Նուխւոյ հասարակութեան կեանքից մինչև ցայսօր մեր համազգայիններից ոչ ոք տեղեկութիւններ չէ հաղորդած ձեր պատուական լրագրին. իսկ նպատակս այս անգամ այն չէ որ տամ Նուխւոյ բաղմակողմանի նկարագիրը, այլ ամենից նախապատուեցի խօսել նորա հոգևոր ուսումնարանի վերա։

1857 թուից հիմնարկուած ուսումնարանը զանազան անձինքների ձեռքով, պէսպէս փոփոխութիւնների ենթարկուելով, մինչև ցայսօր ոչ մի արժանաւոր պտուղ չէ բերել ազգին, վասն զի անտեղի վէճերը, կողմնապահական հոգին և կոյր անհատների կամքին ծառայելը սկզբից մինչև ցայսօր տիրել է նրանում։

Այդ կողմնապահութիւնների որոմնացանները են արժանապատիւ եկաւոր հայր սուրբները։ Քաղաքի հոգևոր ուսումնարանի առաջադիմութեան համար գիւղացի ամենատգէտ մարդկանցից ինքնազլուխ հոգաբարձուք ընտրող հայր սուրբները. քաղաքի ուսումնարանի քանդուելով չբաւականացող գիւղերումն ուսումնարաններ եմք կառուցել ասելով (որոյ հիմքերն անգամ չկան) «Արարատ» ամսագրում յօդուածներ հրատարակելով կաթողիկոսարանին խաբող անձինքը, իւրեանց գլուխը գովելով այս ինչ ուսումնարանը բարեկարգեցինք ասելով՝ եղածները հիմնահատակ կործանողները։

Այն օրից այսինքն 186. թուից երբ մուտ գործեց այստեղ արժանապատիւ նախորդ Ա.... վարդապետը Դ....եանց, երկրառակութեան սկիզբը սահմանեց քաղաքացիների և գիւղացիների մէջ, մեծամեծ խոստումներ արեց գիւղացիներին, որ գիւղերումն ուսումնարաններ պէտք է հաստատի, համոզեց որ գիւղացիք հեռանան քաղաքացիներից. ուսումնարանապատկան սրբարանները և արդիւնքները կապեց։ „Արարատումն" յօդուածներ հրատարակել առաւ գիւղերումն ուսումնարաններ եմ հիմնել հաստատել ասելով. իւրեան հետևողներ ճարեց գիւղացիներից և քաղաքացի խոյեցիներից. թշուառ գիւղացիներին քամեց, դարդակեց հոգաբարձուք գիւղացիներից ընտրեց. ուսումնարանի պատուական ուսուցիչներին զանազան իւր իմացած միջոցներով հրաժարեցրեց։ Քաղաքի ուսումնարանը քանդուեց և գիւղերումն էլ ուսումնարանների հիմք անգամ չերևեցան մինչև ցայսօր։ Երկրորդ դասը քաղաքացիներից—բոլոր աղնուականները, իշխանները և վաճառականները զանազան խնդրագրերով, աղերսագրերով դիմեցին դէպի Սինոդը, դէպի կոնսիստորիան Ղարաբաղու, հոգաբարձուց այդ անիրաւացի ընարութիւնը քանդելու, քանիցս անգամ բողոքեցին Ա.....ի դէմ նրան հրաժարելու համար. բայց այս գործը ուշ լսվեցաւ, այն ժամանակ միայն երբ արժանապատիւ Ա.....բոլոր իւր ցանկացածները կատարել էր, ամէնքին խաբել քանդել էր, էլ բան չէր մնացել։ Վերջապէս 187. թուին Ա..... իւր հրաժարականը տուաւ քաղաքից և անա ներկայացաւ մեզ նորա փոխանորդ Վ.....վարդապետը Մ.....եանց։ Ովսաննա կարդացին քաղաքի նշանաւոր համարուած մարդիքը իւրեանց հետևողների հետ ի միասին։ Դա էլ նոցա կամքովը չարժուեց, ամէնքին առանձինն առանձինն խոստացաւ ուսումնարանները բարեկարգել, բոլոր ժողովրդին հաչտ պահել և ամէն անկարգութիւն-

---

Նա սպասում է, որ մինը ծնէ, միւսը մեռնէ, որպէս զի ինքը կարողանայ շահուել։ Այլ խօսքով, եկեղեցականի եկամտի աղբիւրները եկեղեցւոյ խորհուրդներն են։

Այդ դէպքում ևս մեր եկեղեցականները թշուառդրութեան մէջ են։ Որովհետև, թէ քաղաքներում և թէ գիւղօրայքում նոցա թիւը, ժողովրդի քանակութեանը համեմատելով, այնքան շատ է, որ եկեղեցւոյ խորհրդներից դոյացած արդիւնքը հազիւ է բաւականանում նոցա ապրուստին։ Այդ երևոյթի պատճառը պէտք է որոնել այն իրողութեան մէջ, որ վիճակաւոր առաջնորդները, ի նկատի ունենալով իւրեանց անձնական շահը, շատ անգամ ձեռնադրում են քահանայներ առանց ծուխի։ Խեղճ նորընծան սպասում է, սպասում է մինչև իւր կարգընկերներից մինը վախճանուի, որ ինքը նորա տեղը անցնի։ Իսկ գիւղօրայքում որոշուած ծուխեր ևս չը կան։ Գիւղի տները այնքան բաժանվում են տէրտէրների վերա, որքան աւելանում է նոցա թիւը։ Շատ անգամ ամեն մի հինգ ընտանիքը բաժանուած է լինում մի քահանայի վերա։ Աղքատ գիւղացին ինչով կարող է նորա ապրուստը բաւականացնել։ Բայց ո՞վ կարող էր այդ բոլոր դժուարութիւններին համբերել, եթէ ոչ այն մարդիքը, որոնք կեանքի և ապրուստի այլ հնարների մէջ անընդունակ են իւրեանց հացը վաստակելու։ Ահա այդ է գլխաւոր պատճառը, որ մեր եկեղեցականները մեծ մասամբ բաղկանում են այդ կոչմանը բոլորովին անարժան անձինքներից։

Դժբախտաբար մեղանում, եթէ կը ներուի մեզ այդպէս ասել, քահանայութիւնը այժմ մի որոշ քաստայ է կազմում, որ միայն պէտք է գործէ եկեղեցւոյ համար և ապրէ եկեղեցուց։ Հասարակական գործունէութեան այլ շրջանները նորանց մատչելի չեն։ Զը նայելով որ Մեսոպայի աչակերտներից շատերը զանազան արհեստներով էին պարապվում։

Գ.

Թէ որքան կարևոր է մեզ համար բարւոքել մեր եկեղեցականների դրութիւնը, այդ հասկանալի կը լինի, եթէ մտածենք, թէ որքան անհրաժեշտ է մեզ համար մեր եկեղեցին և մեր կրօնքը։ Մի այնպիսի ազգ, ինչպէս է Հայը, որ չունի մի այլ հիմք իւր գոյութիւնը պահպանելու, միակ նեցուկները նորա ազգայնութիւնը կանգուն պահելու համար՝ մնում են նորա կրօնքը և լեզուն։

Մենք թողնում ենք լեզուի հարցը, որոյ մասին շատ է խօսացուել „Մշակի" մէջ, առնենք կրօնքը։

Աւելի հեռու հայացք ձգելով մեր պատմական անցեալի վերա, մենք տեսնում ենք, որ սկսեալ հեթանոսական դարերից մինչև մեր օրերը, Հայերի կրօնքը և նոցա առանձին դաւանութիւնը, միշտ եղել է մի միջնապարիսպ, որ պահպանել է նորան դրացի կամ տիրապետող ազգերի հետ խառնուելուց։ Որոյ ընդհակառակն, Հայը, շատ տեղերում փոխելով իւր կրօնքը, կորցրուց իւր ազգային գոյութիւնը։

Հայերի մէջ սկսեալ հեռու հնութիւնից կրօնական տարրը այնպէս խորին կերպով միաւորուած է նորա քաղաքական կեանքի հետ, մինչ երկուքն կազմում են մի անհատական մարմին։ Բաժանել մինը միւսից անկարելի է, առանց նոցա գոյութեանը վնասելու։

Բայց ո՞վ պէտք է պաշտպանէ մեր կրօնքը և եկեղեցին, եթէ ոչ մեր եկեղեցական հայրերը։

Հայոց եկեղեցականները մեր նախնեաց ժամանակ չեն կազմել նեղ աբեղայական միաբանութիւններ, որք անձնատուր լինէին միմիայն կրօնական պաշտմունքների։ Նոքա միշտ մօտ են եղել իւրեանց հօտին, և հոգացել են նորա թէ հոգեւոր և թէ մարմնաւոր պիտոյքները։ Նոքա եղել են միշտ ժողովրդական այդ բառի բուն նշանակութեամբ։

Այն դարերում, երբ Հայաստանը տարուբերվում էր մերթ Յունաց և մերթ Պարսից լծի տակ, տեսնում ենք մեր կղերին ոչ միայն հոգս էր տանում նա հասարակութեան կրթութեանը և նորա նիւթական բարեկարգութեանը, այլ մեծ դեր էր խաղում և քաղաքական գործերի մէջ։

Մենք տեսնում ենք Վրթանէս մեծին հայ նախարարների դուռը անցած թագաւորացնում է Խոսրովին և նորա որդի Տիրանին։

Մենք տեսնում ենք Ներսէս մեծին չինել է տալիս աղքատանոցներ, հիւանդանոցներ։ Եւ Վալենտիանոսի ու մեր Արշակայ մէջ հաշտութեան դաշն է կապում։ Մենք տեսնում ենք նորան աքսորված իւր քաղաքական նպատակների պատճառաւ Յունաց բռնակալներից։ Եւ վերջապէս երևումէ նա Նպատայ լերան վերա Ձիրաւի սարսափելի պատերազմում։

Մենք տեսնում ենք Սահակ Պարթևի յարաբերութիւնները երբեմն Թէոդոս կայսեր և երբեմն Պարսից արքունիքի հետ, որը Հայաստանի գահի հոգևվարք դրութեան ժամանակ աշխատում է պահպանել նորա վերջին շունչը...

Վերջապէս մենք տեսնում ենք Մեսրոպին, Խորենացուն, Եղնիկին և մեր ազգի այլ լուսատուներին, որք Հայաստանի այն ճգնաժամի մէջ, երբ մի կողմից չողումէր նորա գլխին Շապուհի և Յազկերտի սուրը, միւս կողմից նենգաւոր Յոյնը նորա անկման որոգայթն էր լարում, մոցրին մեր

ները ի բաց մերժել։ Բայց մի քանի ամիս չքաշեց և ահա կազմուեցաւ Վ.....եան մի խումբ ևս։ Ամենօրեայ վէճեր բացուեցաւ այդ երկու կուսակցութեանց մէջ. բայց ուսումնարանը, մինչև ցայսօր մնաց էլի իւր առաջուան ցաւալի դրութեան մէջ. կուսակցութեանց կրքերին զոհուեց ապագան։ Փոխուեց յաջորդութիւնը, բայց չփոխուեց հոգաբարձութիւնը, չփոխուեց ուսումնարանի դառն վիճակը։ Իւր գալու օրից մինչև ցայսօր ուսումնարանի դուռը ոտք չկոխեց հոգաբարձութեան նախագահ անդամ յաջորդը. հարցաքննութիւններին չներկայացան պատուաւոր քաղաքացիք և հոգաբարձութեանց հաշիւ պահանջող չեղաւ։ Ուսումնարանի, այդ հասարակութեան միակ բարեկամի համար, հոգացողութիւններ անելու փոխանակ անխնայ հաս կամ չհաս պակների հրամանագրերով զբաղուեց, քաղաքի հոգևորականների մէջ բանաւոր պատերազմներ բացեց, ընկերն ընկերի հետ անհաշտ թշնամութիւնով կապեց. և այդ ամէնի երեսը աչքախաբ գոյներով ներկելու և բարձր իշխանութեան աչքին դիպչելու համար, «Արարատ» ամսագրոյ Հոգևոր կառավարութեան պահապանի (сторожъ) ստորագրութեամբ ինքն իւրեան համար յօրինած գովեստների յօդուածը հրատարակել տուաւ, որ սկզբից մինչ ի վերջը սուտ է և իւր գործը չէ։

Այս խառն ու փնթոր կողմնակցութիւններից յառաջացաւ և մի երրորդ խումբ երիտասարդների, որք այդ երկու կուսակցութիւնների էլ նպատակն հասկանալով, հասարակութեան իրաւունքը իւրեանց օգտին ևս ծառայեցնելի իմանալով, բողոքեցին դէմ առ դէմ այդ Վ.....եան և Ա.....եան կուսակցութիւնների, մերժեցին և մերժում են յաջորդների վերացական քարոզները, նոքա պահանջում են ուսումնարանի բարեկարգութիւն միայն և կանոնաւոր կրթութիւն հասարակութեան օրիորդների համար։ 1400 ռուբլի ուսումնարանի անփոփոխ մուտքով երկու հատ եռանդոտ ուսուցիչների կարողութիւն են զգում նոքա և ոչ յաջորդների, ասելով թող նրանք իւրեանց պակաղրամները համրեն։ Բայց ափսոս որ սակաւաթիւ է վառվռուն երիտասարդների խմբիկը և բոլորովին աննշան բազմութեան ձայների առաջ....

Միւս անգամներում Նուխոյ ուրիշ կողմերին վերաբերեալ տեղեկութիւններն էլ իմ պարտքս եմ համարում հաղորդել մեր ազգայիններին «Մշակի» միջոցաւ։

Հոկտեմբերի 20 Մառդի

ՆԵՐԲԻՆ ԼՈՒՐԵՐ

Մեզ շատ զգալի է այն հաւատարմութիւնը որ ընծայում է մեզ հայոց հասարակութիւնը, անդադար ուղղելով «Մշակի» խմբագրութեան զանազան խնդիրները կատարելու, որոց թւում գլխաւոր դերը խաղում են զանազան քաղաքների հայ-ուսումնարանների հոգաբարձուներից խնդիրքները դէպի խմբագիրը՝ այս կամ այն ուսումնարանի համար տեսուչ կամ ուսուցիչներ գտնելու։ Բայց մի և նոյն ժամանակ պիտի ասենք որ մեզ դրեթէ անհնարին է կատարել այդ բոլոր խնդիրները։ Տարուայ ընթացքում մենք մօտ տաս զանազան քաղաքներից այդ տեսակ նամակները ստացած էինք։ Որտեղ պարենք ուսուցիչներ և տեսուչներ, ում առաջարկենք և այդ մասնաւոր անձի կարողութենից վեր է, մինչև մեզանում չը կայ ուսուցչական դպրոց կամ Ներսիսեան դպրոցի մէջ չի լինի մտցրած (գոնէ բարձր դասատան մէջ) ուսուցչական դպրոցին յարմար պրոգրամը։

Ուստի մեզ մնում է միայն առաջարկել հետեւեալը՝ ոչ թէ մասնաւոր նամակներ գրել պ. Խմբագրին, այլ «Մշակ» լրագրի մէջ տպելու համար ուղարկել յայտարարութիւնները, բոլոր պայմաններով, որպէս զի թէ Թիֆլիսում, թէ այլ քաղաքներում ցանկացողները կարդան՝ որ այս ինչ քաղաքի, այս ինչ ուսումնարանում պահանջվում է այս ինչ առարկայի վարժապետ, կամ պահանջվում է տեսուչ, պայմանները և ռոճիկը այս է... և այսպիսով ցանկացողները կարդալով, իրանք դրագրութիւն կը սկսեն այն ուսումնարանի հոգաբարձութեան հետ։

***

Վերջապէս «Դրօշակ» լրագրի № 45-որդը հաղորդում է հետեւեալը՝ մենք լսում ենք, որ պ. Բուլկօ և նրա ընկեր պ. Տէր-Ղուկասովը գնացել են արտասահման։ Մի քանիսը ասում են, իբր թէ պ. Բուլկօն փախաւ, միւսները պնդում են, որ նա ասել է, թէ այս քառասուն օրվայ մէջ Լօնդօնից կը ստանանք հեռագիր, որով նրա ընկերութեան գոյութիւնը կը հաստատվի։ Մենք բացարձակ յայտնում ենք, ասում է լրագիրը, որ այն բանից յետոյ, ինչ պատահեցաւ, այժմ ոչ հեռագիրը կարող է փոխել մեր հայացքը այս գործի մասին և ոչ նամակը։ Ահա գործի դրութիւնը՝ պ. Բուլկօն հաստատում էր, որ երբ քաղաքային վարչութիւնը կընդունի նրա առաջարկութիւնը, նա խոպոն կը ներկայացնէ հարիւր հազար ռուբլ դրաւական։ Արդէն երեք շաբաթից աւելի է, ինչ քաղաքային վարչութիւնը ընդունել է առաջարկութիւնը, ուրեմն եթէ պ. Բուլկօի ընկերութիւն յիրաւի կայ, թող ներկայացնէ այն դումարը և գործը նրանով կը վերջանայ։ Եթէ ոչ, ինչքան էլ հեռագրեր ստացվեն պ. Բուլկօից կամ նրա ընկերութենից, մենք նրանց վերա ուշադրութիւն անդամ չենք դարձնի և էլի էն համոզմունքի վրա կը մնանք, որ նա սուտ պարծենում է։ Մենք սպասում ենք հարիւր հազար մանէթի և ոչ թէ հեռագրերի։

***

Մենք լսում ենք, որ պ. Բուլկօ, Քուլթայիս և Փոթի անցնելու ժամանակ ամենքին պատմում էր որ նա արդէն ստացել էր Թիֆլիսի քաղաքային վարչութենից հոկտեմբերի 23-ի ընդհանուր ժողովի նստի պատճէն որ նա տանի Լօնդոն ներկայացնելու,—այն ինչ մենք լսում էինք առաջ որ մեր դէպէշներից յետոյ կը կանգնեցնեն գործը։

***

Պետերբուրգում լինելու է նոյեմբերի 25-ից բոլոր ռուս բաժանորդական ընկերութիւնների ժողովը (կոնգրէս)։ Թիֆլիսի առևտրական բանկից ուղարկվեցաւ այդ ժողովը բանկի դիրեկտորը պ. դօկտոր Աբգար Յովհաննիսեանը։

***

Այս համարում տպում ենք Լօնդօնից ստացած պ. Բրէնդօնի նամակը, որի բովանդակութիւնը անցեալ շաբաթը տպվեցաւ և վրաց «Գրօշակ» լրագրում։ Պարոնը խոստանում է հաղորդել մեզ անդադար ջրանցքի ու դաղի գործի դրութիւնը։

***

„Тифлиск. Вѣстн.“ լրագիրը հաղորդում է, որ պ. Շեօնինգ և Բասսի դիտաւորութիւն ունեն կազմել Թբիլիսի համար մի օպերական խումբ, և յանձն առնել օպէրայի ներկայացումներ։ Ցանկալի է որ այդ դիտաւորութիւնը իրագործվի։

***

Ուրբաթ օրը երեկոյեան մօտ ութ ժամին, Ալէքսանդրեան այգիում պ. Շեօնինգի սրճատանից ոչ հեռու, երբ սրճատան մէջ անդամ երաժշտութիւն կար և բոլոր լուսաւորված էր, քիչ էր մնում դուրսը մարդկերանց թալանէին և սպանէին... ուր է պօլիցեան։

***

Թիֆլիսի պարսից կոնսուլը Միրզա-Ասադուլա-խան, տպեց „Кавказъ“ լրագրի մէջ (№ 134) մի փոքրիկ նամակ հերքելով «Մշակի» 41-որդ համարում տպած Դավրէժից գրած նամակի այն լուրը, որ իբր թէ Միրզա-Իւսուֆ-խանը դատապարտուեցաւ կախվելուն։ Թիֆլիսի Պարսից կոնսուլը ասում է, որ յիշեալ խանը այժ հրաժարեցրած է իր պաշտօնից, բայց կենդանի է և ապրում է Թէհրանի մէջ։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ԱԶԳԱՅԻՆ ՇԱՐԺՈՒՄԸ

Երբ սկսվեցաւ Ֆրանս-գերմանական պատերազմը, ամենքը հաւատացած էին, որ Ֆրանսիան յաղթող կը մնայ։ Բայց որքան զարմացան, երբ հակառակը եղաւ, երբ իրա մէջ բաժանուած, քաղաքականապէս թոյլ Գերմանիան յաղթող դուրս եկաւ պատերազմից։ Ինչումն էր գաղտնիքը։ Ոչ ոք չէր նկատում (մինչև անդամ գերմանացիներից շատերը) որ քաղաքական կեանքի կողմից այդ թոյլ և աննշան երկրումը, հասարակական կեանքը հարուստ էր։ Այդ հասարակական կեանքի արտայայտութիւնները հասարակ քննողի աչքին չէին երևում։ Այդ ամբողջ Եւրոպայի համար անկատելի մնացած հարուստ հասարակական կեանքը, անընդհատ շարժումը, որ նպատակ ունէր ազգային միութեանը հասնելու՝ նորերումս շատ շշափելի կերպով նկարագրեց ներկայ 1873 թ-ին հրատարակված „Die leitenden Ideen und der Fortschritt in Deutschland von 1860 bis 1870“ վերնագրով գրքի մէջ պ. Հերման Բիլոտը։ *)

Այս տաս տարվայ միջոցում, ինչպէս ցոյց է տալիս հեղինակը, բոլոր հասարակական գործիչները ձգտում էին գիտակցաբար թէ անգիտակցաբար մի և նոյն նպատակին։ Օրագրութիւնը, գիտութիւնը, գրականութիւնը, պատմական հետազօտութիւնները, հնագիտութիւնը, արխիտեկտուրան, բանաստեղծութիւնը երաժշտութիւնն անդամ,—ամեն բան որ քանի քանի դարեր Գերմանիայում արհամարհելով նեղ, ազգային հայեացքներ, նեղ, ազգին միայն պատկանող երևոյթներ, թողնելով ազգային յատկութիւններ, բոլոր ժամանակ զբաղված էր ընդհանուր մարդկային գաղափարները ժողովրդի մէջ տարածելով՝ թէ գրականութեան, թէ գիտութեան, թէ ֆիլոսոֆիայի, թէ բանաստեղծութեան միջոցով,—յանկարծ այդ վերջին տաս տարվայ ընթացքում արդէն ընդհանուր մարդկային գաղափարներով հաստատ մտաւոր հողի վրա, սկսում է սահմանափակվել նեղ, ազգային շրջանակով։

Ամեն տեղ սկսում են երևալ հանդէսներ ազգային հերոսների կամ մեծ մարդիկների յիշատակը տօնելու համար, որտեղ ժողովվում են ամեն երկիրների գերմանացիք, հիմնվում են ամեն տեղ անթիւ ընկերութիւններ, գիտական, գրականական, հնագիտական մարմնամարզական, իրաւաբանական, ձարտարապետական և այլն և այլն, որոց նպատակն է մօտացնել ամեն փոքր գերմանական երկիրների գերմանացիներին, և այսպիսով միջոց էր տրվում նրանց մտքերի մէջ միութեան գաղափարի յարուցվելուն։ Բանաստեղծութիւնը և լօմանը անդամ (օրինակ Շպիլհագէնի) պատրաստում են նեղ գերմանական հասարակական հարցերով, օրինակ մշակների հարցով։ Պատմագիրներն անդամ, որք Գերմանիայում յայտնի էին իրանց ընդհանուր մարդկային գաղափարներով, սկսում են այդ վերջին տաս տարվայ մէջ մշակել պատմութիւնը (լինէր նա օտար երկիրների ևս) միշտ աչքի առաջ ունենալով հայրենիքի միութիւնը։ Մոմզէնի „Հռոմի պատմութիւնը“, Բէյլիշենի „Իտալիայի պատմութիւնը“ այնպէս են գրած, որ գերմանացին կարդալով, ոգևորվում է իր սեփական հայրենիքի միութեան գաղափարով....

Մի խօսքով այդ ներքին հասարակական շարժումը նշմարելի էր վերջին տաս տարվայ մէջ գերմանացու ամեն քայլափոխում, և Բիսմարկի արժանաւորութիւնը այն էր միայն, որ այդ քաղաքագէտը հասկացաւ գերմանական ժամանակակից ոգին, և իմացաւ օգուտ քաղել այդ ազգային շարժումից յօգուտ պետական նպատակների, գործ դնելով նրան Գերմանիայի քաղաքական, պետական միութեան գործին։

Գերմանիայի ժողովուրդը ինքն իրան պատատից քաղաքական մեծ շարժման, մշակելով իր ներքին կեանքը, և երբ յայտնվեցաւ Ֆրանս-գերմանական պատերազմը, ոչ թէ առաջնորդից դէպի պատերազմը, որի հետևանքը պիտի լինէր հայրենիքի միութիւնը,—այլ ինքն ազգը յանձնեց իրան տէրութեան ձեռքը....

*) «Առաջնորդող գաղափարները և առաջադիմութիւնը Գերմանիայի մէջ 1860 թուից մինչև 1870 թիւը։

մէջ ուսում և կրթութիւն, լուսաւորութիւն տարածեցին մեր հայրենիքում և ծաղկեցրին մեր գրականութիւնը։

Բայց ինչ ենք տեսնում այժմ։—Մեր եկեղեցոյ սիւների տխուր աւերակները...

Դ.

Հիմնուելով աւետարանական խօսքի այն սկզբի վերա «որպէս ձրի ստացաք, նոյնպէս ձրի պէտք է տաք», բոլորովին հակառակ է քրիստոնէական կրօնքի հոգուն, որ եկեղեցոյ խորհուրդները գործադրուած լինէին որպէս միջոցներ նորա պաշտօնեայների ապրուստը հոգալու։ Որովհետև քանի խորհուրդները կատարվում են վարձադրութեան նպատակով, նոքա ոչ միայն ժողովրդի աչքում զրկվում են իւրեանց սրբազան յատկութիւնից, այլ ստորացնում են նորա մատակարարների համարումը ամբոխի միջում։ Այստեղից է ծագում ժողովրդի մէջ այն մինչև ատելութեան հասած սառնասրտութիւնը դէպի իւր հոգևոր հայրերը։

Բայց ինչ անէ քահանան, նա մարդ է և որպէս ամեն կենդանի էակ իւր գոյութիւնը պահպանելու համար կարօտ է մնունդի։ Կօչկակարութիւն անելը, կամ բաղարում մի բան ծախելը նորան արգելուած է։ Ուրեմն ինչով պէտք է նա իւր գլուխը և ընտանիքը պահէ, եթէ մկրտութիւնից և թաղումից փող չստանայ։

Մենք բոլորովին համաձայն ենք Պողոսի հետ, թէ «կալի մէջ աշխատող եղան գունչը չեն կապում»։ Եւ կաւելացնենք մեր կողմից, որ եկեղեցոյ պաշտօնեաները պէտք է ապրեն եկեղեցուց։

Իսկ հարցը նոցա ապրուստի հնարները որոշելու մէջն է։

Այդ խնդրի մէջ մենք օրինակ ունենք մեր աչքի առջև մեզանից աւելի բարձր քաղաքակրթութեան աստիճանի վերա կանգնած ազգերը, որպիսի են Գերմանացիք, Անգլիացիք և Շվեյցարիացիք։ Նոցա մէջ ամեն մի եկեղեցական պաշտօնեան ունի իւր հաստատ և որոշեալ ռոճիկը։ Ինչու մենք ևս գործ չը դնենք այն ձեը, ինչ որ նոքա կազմեցին դարեւոր փորձերից յետոյ։ Այստեղ կրօնքի դէմ դատանաբանական ոչինչ չկայ։ Հարցը բոլորովին տնտեսական է։ Փոխանակ թոյլ տալու, որ «տէրտէրը» մի պսակ կատարելու ժամանակ ամբողջ քանի մի ժամ հարսանիքատիրոջ հետ բազառանէր, աւելի յարմարաւոր չէր լինի արդեօք, եթէ եկեղեցական խորհուրդները և այլ ծէսերը կատարվէին բոլորովին ձրի։ Իսկ ամեն մի ծխական ժողովուրդը համեմատ իւրեանց կարողութեանը վճարէին մի որոշեալ նուէր, կամ աւելի լաւ է ասել հոգևոր տուրք՝ սուրբ սեղանի դանձարանին։ Ժողովրդից ընտրուած երեսփոխանութիւնը կանոնաւոր հաշուապահութեամբ խնամք տանէր մուտքի պահպանութեանը և այդ գումարից վճարուէր քահանայների և Աստուծոյ տան միւս սպասաւորների ռոճիկները։

Մի այդպիսի նոր կազմակերպութիւնը, բացի եկեղեցոյ մուտքերի միջոցները դիւրացնելը, կունենայ և այն օգուտը, որ կապահովէ քահանայների ապրուստը և եկեղեցոյ պաշտօնի մէջ մտնել ցանկացող անձինք հաստատ հողի վերա կանգնած կը լինեն։ Այն ժամանակ, կարող ենք համարձակութեամբ ասել, որ մեր եկեղեցականութիւնը կը մաքրուէր անպիտան մարդկից, որովհետև, կարգերը «ընտրեալներին» միայն տուած կը լինէին։

Մենք այդ իրողութեան վերա նայում ենք բոլորովին գործնական կէտից։ Ուրեմն պարզենք մեր միտքը։

Մենք յիշեցինք մեր յօդուածի մէջ, թէ հայոց եկեղեցականները ժողովրդականներն. այսինքն նոքա ընտրվում են ժողովրդի կամքով և առաջարկվում են Հոգևոր Կառավարութեանը ձեռնադրութեան համար։ Այդ կանոնը այնքան հին է մեր ազգի մէջ, որքան հին է նորա եկեղեցոյ ինքնակառավարութեան սկիզբը։ Բայց դարերի ընթացքում այդ օգտակար սովորութիւնը կորցրեց իւր բուն նշանակութիւնը, պահպանելով միայն արտաքին ձևերը։ Եպիսկոպոսները սկսան մեծ դեր խաղալ և եկեղեցոյ կարգերը մեծ մասամբ գնուեցան արծաթով։

Իսկ երբ մեր եկեղեցոյ մէջ կը մտցնուի այն սիստեման, որ ժողովուրդը ռոճիկ կը նշանակէ քահանայներին, այսինքն նոցա ապրուստի հոգաբարձութիւնը իւր վերան կառնէ, այն ժամանակ նա կընտրէ իւր միջից այնպիսիներին, որք թէ իւրեանց գիտութեամբ և թէ բարոյականութեամբ արժանաւոր կը լինէին այդ սուրբ կոչմանը։ Այլ խօսքով, «ընտրեալները» միայն կարող կը լինէին եկեղեցոյ սպասաւորութեան մէջ մտնել։ Եւ այդ վերջինները իւրեանց կողմից կաշխատէին միշտ սրբութեամբ կատարել իւրեանց պարտականութիւնը, ի նկատի ունենալով որ մի փոքր անկարգութիւնը կարող էր նորանց զրկել հացից։

Ահա այդպիսով, սիրելի ընթերցող, մեր եկեղեցին կարող էր մաքրուել անպիտան սպասաւորներից և Աստուծոյ տաճարը կը փրկուէր չնորհավաճառութեան հանդիսարան լինելուց։

Մելիքզադէ

ՆԱՄԱԿ ԼՕՆԴՕՆԻՑ

Ձեր հեռագիրը հարց է առաջարկում մեզ, թէ կայ արդեօք մի ընկերութիւն այդտեղ, որ յանձն առնէր գազը և ջուրը Թիֆլիսում և ինչ է նրա դրութիւնը։

Ամեն „Compagnie Générale“ պիտի մտցրած լինի ցուցակների մէջ, ուրեմն մեզ դժուար չէր լինի գտնել նրան, եթէ նա մտցրած լիներ, բայց ընկերութեան անունը մեզ բոլորովին անծանօթ լինելով, մենք մեր բոլոր ջանքերը գործ դրինք, որ նրան գտնենք։

Եւ ահա ինչ գտանք՝ ցուցակների մէջ մտցրած ընկերութիւններից, որ մի և նոյն ժամանակ Թիֆլիսի հետ էլ գործ ունենար, յայտնվեցաւ մի այն մի ընկերութիւն, այն է երկաթի հանքերը բովադործելու նպատակով Թիֆլիսից ոչ հեռու։ Ցիշեալ ընկերութիւնը մտցրած է օրինական ցուցակների մէջ անցեալ սեպտեմբեր ամսին, բայց երևում է դեռ ևս առանց դրամագլուխ և նրա անունն էլ մեզ բոլորովին անծանօթ է։

Ինչ և իցէ, եթէ ձեզ հարկաւոր կը լինի նոր և աւելի մանրամասն տեղեկութիւններ, գրեցէք մեզ և մենք պատրաստ ենք ձեզ հաղորդելու։

Նոյեմբերի 11. Ն. Բրէնդօն.

ՆԱՄԱԿ ՓԱՐԻԶԻՑ

Տեսէք, ահա երեք տարի է որ պատգամաւորների մի խումբ աշխատում է Ֆրանսիայի մէջ մացնել միապետական ձևերը։ Մանաւանդ վերջին չորս ամիսները ամենայն միջոցները գործ դրվեցան այս նպատակով։ Բոլորը իզուր էր։ Գործը չէր յաջողվում։ Նոքա աշխատում էին ամենայն տեսակ զիջումներ անել, աշխատում էին համոզել Ֆրանսիային, որ վերականգնելով միջնադարեան միապետութիւնը կը սկսվի նոր թուական—աղատութեան թուականը։ Բայց Ֆրանսիան չէր հաւատում։ Իսկ այս միջոցին Շամբորը, ասես գիտամամբ, իր նամակը հրատարակեց։ «Ոչինչ զիջումներ, ոչինչ համաձայնութիւն ժամանակակից նոր ոգու հետ»։ Այս նամակը բոլորովին բաւական էր Ֆրանսիայի մէջ միապետութիւնը յաւիտանս սպանելու համար։ Եւ առանց դորա էլ խոր գերեզմանը, որի մէջ նա թաղած է, ծանր քարով ծածկվեցաւ, որի վերայ ինքն դահին ձգտողը (պրետենդէնտը) գրել էր՝ «այստեղ թաղած են Հենրի V-ի մնացորդները»։

Միապետութիւնը չը յաջողվեցաւ։ Պէտք էր մի ուրիշ բան հնարել, միայն որ խանգարվի հանրապետութեան հաստատվելը։ Ինչ պէտք էր արած։ Մակ-Մահոնին դիկտատոր չինել։ Այն ժամանակ մեր ձեռքումը կը լինէր տաս տարի չարունակ անպայման իշխանութիւն, տաս տարի մենք Ֆրանսիայի անպատասխանատու տէրեր կը լինէինք։ Իսկ ով որ կընդդիմանայ, նորա հետ մենք գիտենք ինչպէս կը վարվենք։ Այսպէս էին մտածում միապետականները։ Նոքա դորա վերա յոյս ունէին, որ չիոթված հանրապետականները չեն իմանայ նոցա ընդդիմանալու և կամայ ակամայ կը տան Մակ-Մահոնին 10 տարվայ դիկտատուրը։ Ոչ, ոչ, աղաղակեց գրեթէ բոլոր լրագրութիւնը, թէ հանրապետական, թէ բոնապարտեան կուսակցութեան։ Բայց միապետականները չեն յուսահատվում՝ նրանք սկսումեն զիջումներ անել. «Եթէ տաս տարի չատ է, այն ժամանակ եօթ տարով կը նշանակենք, կամ վերջապէս հինգով։ Այդ էլ չէք կամենում,—բաս էլի կը զիջենք, ինքներս անգամ զարար անելով, թող երեք տարի լինի»։

Ինչով պիտի վերջանայ այդ ամենը։ Կընկնեն արդեօք միապետականները, կամ նրանց կաջողի Մակ-Մահոնի համար դիկտատուրը ստանալ և յետոյ այդ իրաւունքից օգուտ կը քաղեն, որ վերականգնեցնեն միապետութիւնը։ Երևի ոչ, իսկ եթէ կաջողի, այն ժամանակ այդ դարձեալ մի դաս կը լինի Ֆրանսիայի համար, որքան վտանգաւոր է, երբ ժողովուրդը յանձնում է ում և իցէ երկիրը կառավարելու իրաւունքը, առանց նրանից հաշիւ ու պատասխանատուութիւն պահանջելու։

Բազէնի պրօցէսը դեռ չարունակվումէ և երևի երկար չարունակվելու է։ Արդէն չատ բանի մէջ նա այժմ մեղաւոր է երևում։ Որքան անգամ նա միջոց ունէր ելք գտնելու այն դրութենից, որի մէջ նա ինքն իրան դրեց Մէցում, և ինչքան կամակորութեամբ նա աշխատում էր օգուտ չը քաղել այդ միջոցներից,—այդ այժմ ամենքին պարզ է։ Եւ Բազէնը մենակ չէր։ Ահա մի ամբողջ շարք վկաների։ Զօրապետները, գնդապետները և զօրքի այլ մեծ ասիճանաւորները, որոց յանձնված էր Մէցի պաշտպանութիւնը...։ Ստացած դուք արդեօք ահա այս հեռագիրը թշնամիների շարժման մասին։—Չեմ յիշում, կարելի է։—Ինչի հացի բաւական մեծ պաշար չունէիք ձեզ հետ զօրքի համար։—Այդ իմ գործը չէր։—Ինչի կոտրել չը տուեցիք այս ինչ կամուրջը, իմանալով որ թշնամիների զօրքը մօտենում է։—Ես ոչինչ տեղեկութիւն չունէի այդ կամուրջի գոյութեան մասին...

Եւ բոլոր պատասխանները այսպէս են կամ սրանց նման, որք լսելի են լինում հայրենիք պաշտպանողների բերանից։ Ահա Ֆրանսիայի բարձր ասիճանաւորները։

Ուրիշ կողմից տեսէք ինչ էր անում ժողովուրդը։ Ահա մի գիւղացի, որ քիչ էր մնում ենթարկվեցաւ գերմանական զինուորականի հրացանից սպանվելուն, երբ խորամանկութիւն բանացնելով, թշնամիների զօրքի միջոցով անցաւ, որ կարողանայ իմաց անել թշնամեաց մօտենալու մասին։ Ահա մի ուրիշը որ ամբողջ օրը ջրի մէջ անցկացրեց, մինչև գլուխը, որ կարողանայ հասցնել Բազէնին մի հեռագիր ֆրանսիական բանակից։ Ահա մինչև անգամ մի հասարակ կին որ անասելի վտանգներին ենթարկվելով, մի նշանաւոր յանձնարարութիւն է կատարում.....։

Ինչ մեծ տարբերութիւն, ինչ հակասութիւն մի և նոյն ազգին պատկանող բարձր ասիճանաւորների և հասարակ գիւղացիների մէջ։

Նոյեմբ. 10. Պ. Իզմ.

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

«Մշակի» խմբագրութեան մէջ ստացվեցաւ «Դաստիարակ» ամսագրի 4-որդ համարը։

***

Մենք լսում ենք որ մի օրիորդաց ուսումնարանի մէջ, հէնց որ ստացվում է մեր լրագիրը, պ. տեսուչը վերցնում է իսկոյն թերթ, գնում է իր գրպանը և իր հետ տուն է տանում....այսպիսով պարոնը աղատում է թէ աշակերտուհիներին, թէ վարժուհիներին «Մշակ» կարդալու դայթակղութենից....

***

Վրաց «Դրօէբա» լրագրում գրում են, որ մի քանի վրացի երիտասարդներ սկսել են աշխատել գիւղերի մէջ ուսումնարանները հաստատելու։

***

«Դրօէբա» լրագիրը կրկնելով մեր անցեալ համարի մէջ յայտնած անգլիացի պ. Պրէտիմանի գանգատը «Մշակի» և «Դրօէբայի» հեռագրերի տպվելու մասին, աւելացնում է՝ «Եթէ պ. Պրէտիմանը սխալ չէ կերել, ուրեմն ինչ է այդքան դառնութեամբ գանգատվում։ Մենք մեծ ուրախութեամբ յայտնում ենք Զաթախի հանքերի առնողին (?), որ մենք հաւաքեցինք մէկ քանի հետաքրքիր տեղեկութիւններ նրա ընկերութեան և ընդհանրապէս Զաթախի հանքերի գործերի մասին, նմանապէս և նրա սեփական անցեալի վերաբերութեամբ, և պատրաստվում ենք մինչ մայիս ամիսը տպել այս տեղեկութիւնները հետևեալ վերնագրով՝ չատ զարմանալի և հետաքրքիր պատմութիւն մի անգլիացու, որ Լիվերպուլից երկու հակ չիթ բերեց և նրա փոխանակ կամեցաւ կէս միլիօնաւոր հանքերը տանել և չը կարացաւ իր դիտաւորութիւնը իրագործել։ Թող պ. Պրէտիմանը այս մասին էլ գանգատէ։

***

Ղուբայից ուղարկել են մեզ նոյեմբերի 9-ից հետևեալ նկատողութիւնը։ «Մեղուի» խմբագրութիւնը չատ տարիներ խոր խաւարի մէջ խարխափելուց յետոյ, իր լրագրի ներկայ տարվայ 39-որդ համարի առաջնորդող յօդվածով յայտնեց վերջապէս իր ծայրայեղ տգիտութիւնը։ Չը գիտենք ինչ մտքով նա այդ համարի մէջ սկսում է յանդուգն յարձակմունքներ անել գերմանական ուսումնականների դէմ, արձակելով մի և նոյն ժամանակ բամբասանքներ....Եթէ նա այն մտքով հանդէս է գուրս գալիս, որ իր քաջութիւնը ցոյց տայ,—դա արդէն յայտնի է մեզ նրա բազմամեայ գործունէութենից....եթէ գերմանական ուսման վրա իր ունեցած հմտութիւն է ցանկանում յայտնել,—մենք կասենք, թէ նա չը գիտէ այդ ուսման հոտն էլ անգամ ինչ է։ Իսկ եթէ կամենում է միայն յարձակվել Գերմանիայի կրթութեան վրա առհասարակ,—մենք ակամայ ստիպված կը լինենք առաջ բերել այստեղ Կրիլովի մի առածի վերջին տողերը՝ „Знать моська сильна, что лаетъ на слона“...

***

Նոյեմբերի 19-ին Թիֆլիսի մեծ թատրոնում եղաւ հայոց ներկայացում։ Խաղում էին «Աւազակներ» Շիլլերի հեղինակութեան 1, 2 և 4-որդ գործողութիւնները, մի վոդէվիլ և զաւեշտ։ Այդ ներկայացումը պ. Ամերիկեանի վերջին հրաժարականն էր, որից յետոյ, ինչպէս լսում ենք, նա պիտի մեր Թիֆլիսը թողնի։ «Աւազակների» մասին մենք կասենք, որ այն ինչ որ թոյլ տուած է օպերայի մէջ, չէ կարող յարմար լինել մի դրամայի՝ այսինքն ամբողջ դրամայից խաղալ երկու երեք գործողութիւն, որով պիէսան կորցնում է իր ամբողջութիւնը։ Ամերիկեանը բաւական աջողակ երգեց քանի մի կուպլէտներ, ռուսերէնից փոխարկված, օրինակ „Շնորհակալ եմ, չէի սպասում“։—Բայց միթէ դերասանը պարտաւոր է կրկնել անդադար այն բաները, որ թատրոնի վերի յարկի ստորին ժողովուրդը հաւանում է, օրինակ չան պէս հաչելը կամ կատուի պէս մլաւելը....։ Ժողովուրդը „Աւազակների“ ներկայացման ժամանակ ծիծաղում էր ամենասրտաշարժ տեղերում։ Այն տեղերում, որտեղ Ամերիկեանը ճչմարիտ լաւ էր, ժողովուրդը փոխանակ գրաւվելու, չը գիտեմ ինչի ծիծաղում էր...

Բայց նոյեմբերի 19-ի ներկայացման մասին դարձեալ կը խօսենք։

***

Պ. Գէորգ Եւանդուլեանցը մեզ խնդրում է յայտնել, որ „Մեղուի Հայաստանի“ լրագրի № 44-որդում տպած յօդվածը, Գ. Ե. ստորագրութեան նայելով, չատերը նրան են վերաբերում, ուստի նա պարտաւորութիւն է համարում յայտնել որ յիշեալ յօդվածը նրան չէ։

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ

ԹԻՖԼԻԶԻ ՎԱՃԱՌԱՆՈՑ

(Նոյեմբերի 21-ին)։

ՈՍԿԻՆ, (պօլուիմպէրիալ)	6	ռ.	18	կ.
ԲԱՄԲԱԿ Երևանու. (հին սերմ)	4	„	20	„
„ Ամերիկաի սերմից	6	„	—	—
ԲՈՒՐԴԸ թուչի	6	„	—	—
„ թարեքեամի	4	„	—	—
ՇԱՔԱՐԸ Ռուսի (Բրօցկու)	9	„	10	„
„ „ միւս տեսակը	8	„	90	„
„ զագրանիցու տրանցիդ.	5	„	60	„
մաքսը վճարած	8	„	70	„
ՇԱՔԱՐԱՒԱԶԸ Ռուսի	6	„	20	„
ՂԱՀՎԱ Լիվանի լաւը	15	„	50	„
„ Մօկօ, չատ լաւը	18	„	—	—
„ Մարտինիկոի, ցածրը	14	„	20	„
ԱԼԻՒՐԸ Երևանի առաջին տեսակը	1	„	10	„
„ „ երկրորդ տեսակը	—	—	90	„
ԱԼԻՒՐԸ Գեանջու հասարակ	1	„	—	—
„ Շորագեալու	1	„	10	—
ԳԱՐԻՆ Երևանի	—	—	50	„
ՊՂՊԵՂԸ	11	„	—	—
ՇԻՐԲԱԽՏԻ ձէթ	8	„	—	—
ՄՈՄ	11	„	20	„

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԵԱՆ ՎԱՃԱՌԱՆՈՑ

ՓՈԽԱՆԱԿ. բարաթ պօլս. . . վճ. . . 6—72
„ „ Թաւրիզում վճ. . . 4—90
ՄԱՐՍԵԼ և Փարիզ, 100 բուբլին ածէ. 344 ֆր.
ԼՕՆԴՕՆԻ վերա, (Օդէսաի կուրսը) 7 բուբլի 42 կոպէկը ածէ. . . . 1 լիրա
ՄԱՐՍԵԼՈՒՄ բամբակի 50 քիլօ (3 փութ 2 գրվ.) Երևանու Ամերիկ. սերմի բամբակը ծախվումէ . . . . 72 ֆր
„ առաջին տեսակ (հին սերմ) . . . . . 57 ֆր.
ՄԱՐՍԵԼՈՒՄ թուչի սպիտակ բուրդը ծախվումէ . . . . 90 ֆր.
„ սեր և մոխրագոյնը . . 65 ֆր.
„ գառան բուրդը ածէ . . 100 ֆր.
„ թարաք. բուրդը ածէ . . 70 ֆր.
„ Ղարաբ. բուրդը ածէ . . 60 ֆր.
ԿՕՍՏԱՆԴՆՈՒՊՕԼՍՈՑ խարչ Նուիսայ թեղն մետաքսը) չատ ընտիրը 150—160 բուբլի։ Թոյլ։

ՑԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

НОТАРІУСЪ

МЕЛИКЪ-КАРАГОЗОВЪ открываетъ нотаріальныя дѣйствія съ 22-го ноября, въ конторѣ своей находящейся возлѣ Эриванской площади, въ домѣ доктора Іоанисіани, подъ Коммерческимъ Банкомъ.

1 (3)

Մի ֆրանսիացի որ բնակում է գնդապետ ինժիներ Հէօրշելմանի մօտ, ունելով մի քանի ազատ ժամեր ցանկանում է պատրաստել ռուսերէն լեզվով երիտասարդներին զանազան ուսումնարանների համար, դոցա պրոգրամմային համեմատ։ Կամ դասեր տալ ֆրանսերէն լեզուի, գրականութեան։ Ցանկացողները դիմումեն կամ պ. Հէօրշելմանի մօտ (Կուկիա) կամ հասցէները թողնում են պ. Իվանովի ընթերցարանումը։

1 (3)

«Մեծ մարդերի պատմութիւններ» անունով գիրքը (գինը 1 ռ.) կարելի է առնել պ. Վարդանեանի գրավաճառանոցում։ Հարիւրով կամ յիսուն հատով առնել ցանկացողները կարող են նոյնպէս դիմել դէպի պ. Էնֆիաճեանի տպարանը։ Հարիւրին 20% զիջումն։

Գրիգոր Տէր-Մելքիսեդէկեան

ՀՕԼԼԱՆԴԱԿԱՆ ՊԱՆԻՐ, որ պատրաստվում է ԳՈՐՈՒ կալվածատէրերի մօտ, պ. Ախլէդիանի կառավարութեամբ, ծախվում է ԴՐԷԹԽՈՒԴՕՎի խանութում, դվորցովի փողոցում, Ալծրունու տանը, Ֆունտը 30 կոպէկով։ 3 (3)

Լաւ Կուշենբախի պանիր և շատ լաւ մաշինով մաքրած սարի մեղր, կարելի է միշտ գտանել Հ. Վէյցարիական մագազինում։—Գօլովինսկի պրոսպեկտի վերայ Օրբելեանի տանը։ 5 (10)

13 յունիսի 1872 թուին ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԹԻՖԼԻՍԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԱԳՈՒԽԻ (ազիսի) ԳՈՐԾԱՐԱՆՆԵՐԻ ՀԻՄՆԱԴԻՐՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ։

Ընկերութեան դրամագլուխն է 75,000 բուբլի 750 հարիւր բուբլանոց ակցիաների բաժանած։

Թիֆլիսի փոխադարձ կրեդիտի ընկերութեան մէջ հոկտեմբերի 23-ին սկսած ստորագրութիւնը ԹԻՖԼԻՍԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԳՈՐԾԱՐԱՆՆԵՐԻ ակցիաների վերա, կը շարունակվի ընկերութեան կանոնադրութեան § 5 համեմատ մինչև այս տարվայ 13-ը դեկտեմբերի այն պայմանների վերայ, որ հրատարակել է թէ մեր և թէ Թիֆլիսի փոխադարձ կրեդիտի ընկերութեան վարչութեան կողմից „Кавказъ“ լրագրի №№ 124 125 և 126.

Ընկերութեան կանոնադրութիւնը տպվեցաւ նոյն լրագրի 106, 107 և 108 համարների մէջ և ձրի է տրվում ստորագրութեան ժամանակ։

Ի. Կոլոբով.
Օ. Սիմենսոն.
Պ. Գոտովցով.

3 (5)

ТИФЛИССКІЙ ВѢСТНИКЪ

въ 1874 году

будетъ издаваться по той-же программѣ, въ тѣ-же сроки, и въ томъ же объемѣ.

ПОДПИСНАЯ ЦѢНА

Безъ доставки въ г. Тифлисъ
въ годъ . . . . . 7 руб.
на полгода . . . . . 4 „

Съ доставкою на домъ и съ пересылкою во всѣ города
на годъ . . . . . 8 руб.
полгода . . . . . 4 „ 50

Дозволено Цензурою. Тифлисъ, 21 Ноября 1873 г. Մէլիքովի և ընկ. տպարան Խմբագիր—հրատարակող Գրիգոր Արծրունի